ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 11» դեկտեմբերի 2018 թ. N 325-Ա

## ՀԱԿՈԲ ՂՈՒԼՈՅԱՆԻՆ
## ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 161-րդ, 163-րդ, 164-րդ, 169-րդ հոդվածների, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հակոբ Ղուլոյանի դիմումը՝

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի վարիչ Հակոբ Ղուլոյանին տրամադրել 2018 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործած մասը և լրացուցիչ արձակուրդը՝ 2018 թվականի դեկտեմբերի 26-ից 2019 թվականի հունվարի 25-ը ներառյալ:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի վարիչի պարտականությունները 2018 թվականի դեկտեմբերի 26-ից 2019 թվականի հունվարի 25-ը ներառյալ դնել ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Միհեր Կյուրեղյանի վրա:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ:

4. Աշխատանքի մեջ համարել 2019 թվականի հունվարի 29-ից:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Գ.ՍԱՆՈՍՅԱՆ

ք.Գավառ